Տեղեկություններ ամբիոնի մասին

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնը ձևավորվել է 1995 թ.-ին:

1995-2001 թթ.-ին ամբիոնը ղեկավարել է փիլիսոփայական գիտություն-ների դոկտոր, պրոֆեսոր Հենզել Գերասիմի Մանուչարյանը: 2001 թ-ից մինչև օրս /ընդհատումով 2011-2013թթ./ ամբիոնը ղեկավարում է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մամբրե Սուրենի Նազարյանը (էլ. փոստ՝ mambre.nazaryan.police@gmail.com): 2011-2013թթ. ամբիոնը ժամանակավորապես միավորվել է լեզուների ամբիոնին և վերանվանվել է լեզուների և հասարակագիտական առարկաների ամբիոն: Ղեկավարումը այդ տարիներին իրականացրել է Աղավնի Ալեքսանդրի Հայրապետյանը: Ներկայումս ամբիոնն ունի 6 հաստիք՝ ամբիոնի պետ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս /2 հաստիք/::

Ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը զբաղեցնում է տնտեսական գիտությունների թեկնածու, ոստիկանության գնդապետ Ռոստոմ Սարգսյանը:

Ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության փոխգնդապետ Արթուր Սարգսյանը:

Ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության մայոր Անուշ Գրիգորյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոններ զբաղեցնում են ոստիկանության կապիտան Մելանյա Դավթյանը ու ոստիկանության ավագ լեյտենանտ Մարիամ Կարապետյանը:

Ամբիոնում պայմանագրային հիմունքներով դասավանդում է պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Սահակյանը:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝ կրթական և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի մասնագիտական ուղղվածությամբ ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ և գիտաուսումնական այլ նյութեր մշակելը, ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի

կարծիքների պատրաստելը, ամբիոնին կից գործող գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2012-2018 թթ. ընթացքում ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմը հրատարակել է 20-ից ավելի գիտական հոդվածներ, 5 ուսումնամեթոդական ու ուսումնական ձեռնարկներ, 3 դասագիրք, ամբիոնի կողմից պատրաստվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքներ: